ՇԻՐԻՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՔԱՆԴՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ես նրանց մասին այնպիսի ճշմարտություն կպատմեմ, որ ամեն մի սրից սարսափելի է:
Վ. Շեքսպիր

ՀՏԴ 329(479.25):941(479.25)

1985–1991թթ. խորհրդային երկրում վերակառուցման քաղաքականությունն իրականացնող կուսակցական և պետական մի քանի հայտնի ղեկավար գործիչների հուշագրությունների, ինչպես նաև քաղաքագետների ու պատմաբանների արժանահավատ թվացող հրապարակումների ուսումնասիրման հիման վրա, ընթերցողի ուշադրությանը ներկայացված սույն հոդվածում, ցույց տվեցինք, թե որոնք էին այդ ուժեղ և մեծ պետության կազմաքանդման գլխավոր պատճառները, միաժամանակ փաստեցինք, որ կայսրության կազմաքանդման գործընթացը կանխելու հնարավորությունները սպառված չէին: Ավելին, հիմնավորեցինք, որ գլխավոր քարտուղարի պաշտոնն ստանձնելուց հետո, Գորբաչովը և նրա ամենամերձավոր շրջապատը հռչակելով «մարդկային դեմքով սոցիալիզմի» ստեղծման գաղափարը, հենց սկզբից էլ խնդիր էին դրել այդ գաղափարի իրականացման հողի տակ նախապատրաստել երկրի անցումը մասնավոր–կապիտալիստական տնտեսության, իշխանությունից հեռացնել ԽՄԿԿ–ին և հասարակությանը գաղափարապես վերազինելով փլուզել ԽՍՀՄ–ը, ստեղծել «նոր աշխարհակարգ», նաև բացահայտեցինք, որ երկրի ղեկավարները խնամքով թաքցնելով ԽՍՀՄ–ը փլուզելու գործում արտաքին ուժերի միջամտությունը, ինչպես դավաճանեցին իրենց իսկ հռչակած վերակառուցման քաղաքականությանը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ վերակառուցում, հրապարակայնություն, բարեփոխիչ, բարենորոգիչներ, կոնվենցիա, ՏՓԽ, ՎՊԿ, ԱՄՀ, պետություն–կորպորացիա, մլադոռեֆորմատորներ, դեինդուստրիալիզացիա, տոտալիտար, բարոյական սոցիալիզմ, լիբերալիզմ, դեմոկրատական հեղաշրջում, քաղաքական և տնտեսական բարեփոխումներ, վերակառուցման «ճարտարապետներ», վարչա–հրամայական համակարգ, Եվրոպան մեր ընդհանուր տունն է, համաեվրոպական տուն, նոր համաշխարհային կարգեր, նոր աշխարհակարգ:

1991թ. դեկտեմբերի 25–ին Մ.Ս. Գորբաչովը հայտնվեց հեռուստացույցների էկրանին և հայտարարեց, որ Խորհրդային Միությունը այլևս գոյություն չունի: Կրեմլի պալատի գագաթից հանվեց կարմիր դրոշը: Համաշխարհային խոշորագույն գերտերություններից մեկը վերացավ աշխարհի քարտեզի վրայից:

Կարծիք կա, որ Խորհրդային Միու-

թյունը զոհվեց 1980–ականների կեսերին վրա հասած ճգնաժամի արդյունքում:

«Մասնագիտական գրականության և քաղաքական հրապարակախոսության մեջ,– գրում է ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյի նախկին անդամ Վադիմ Անդրեևիչ Մեդվեդևը,– մինչև հիմա էլ ներկայացվում է այն տեսակետը, համաձայն որի ամենավճռական գործոնը, որ ստիպեց խորհրդային ղեկավարությանը սկսել վերակառուցումը, տնտեսական դժվարություններն էին: Հավատացնում են, որ 80–ականների սկզբներին խորհրդային տնտեսությունը գտնվում էր քայքայման նախաշեմին» [1, էջ 67]:

Այն, որ ԽՍՀՄ–ը դեռ 50–ական թվականների վերջերից սկսել էր կորցնել զարգացման նախկին տեմպերը, այն, որ երկիրը կարիք ուներ բարեփոխումների, ոչ ոք չի ժխտում: Սակայն մինչ օրս էլ համոզիչ ապացույցներ չկան, որ վերակառուցման սկզբում ԽՍՀՄ–ը տնտեսական ճգնաժամ էր ապրում, և առավել ևս, որ այդ ճգնաժամը մահացու էր ու անդառնալի [2, էջ 27]:

Ելնելով սրանից, ուշադրություն է գրավում այն փաստը, որ Վ.Ա. Մեդվեդևը, որը վերակառուցման «ճարտարապետներից» էր, կատեգորիկ հերքում է այն պնդումները, թե վերակառուցումը խորհրդային տնտեսության ճգնաժամի ծնունդ էր [3, էջ 66–74]:

Իսկ ահա Մ.Ս. Գորբաչովի օգնական Գեորգի Խոսրոևիչ Շահնազարովի վկայությունը: Մահից ոչ շատ առաջ նա ասել է, որ չնայած 80–ականների կեսերին խորհրդային հասարակությունը հղի էր վերակառուցմամբ, միամտություն կլիներ կարծել, թե «արմատական փոփոխությունները մեր երկրում այնքան էին հասունացել, որ երկիրը, հղի կնոջ նման արդեն 9–րդ ամսում էր և, ուր որ է, պետք է ծննդաբերեր դրանք» [4, էջ 36]:

Եթե ելնենք այս այլաբանությունից, ստացվում է, որ «վաղաժամ ծնունդ» տեղի ունեցավ, իսկ դրա խթանումը արհեստական բնույթ էր կրում:

Սա խոստովանում էր Մ.Ս. Գորբաչովն ինքը:

Նրա հոդվածներից մեկում ասվում է. «Վերակառուցումը կյանքի կոչվեց ավելի շուտ մոտեցող ճգնաժամի կանխազգացումից, քան սպառնացող աղետի պատճառների և մասշտաբների հստակ ըմբռնումից» [5, էջ 5]:

Գրող Վ. Երոֆեևի հետ զրույցի ժամանակ, պատասխանելով այն հարցին, թե ինչ կլիներ, եթե իշխանության գալով, ինքը չսկսեր այդ բարեփոխումները, Միխայիլ Սերգեևիչը հայտարարեց, որ դեռ էլի մի տասնհինգ տարի «կթագավորեր» [6, էջ 5]: Այս նույն գաղափարն իր արտացոլումն է գտել նրա «Դեկտեմբեր–91» գրքում [7, էջ 5] և «Պրոֆիլ» ամսագրին տված հարցազրույցում [8, էջ 5]:

Սրանով նա փաստորեն խոստովանեց, որ 1985թ. իրավիճակը երկրում աղետալի չէր և որ այդպիսին այն դարձավ արդեն վերակառուցման տարիներին:

Որոշ հեղինակներ պնդում են, որ երկիրը աղետի հասցրեց ռեֆորմատորների (բարեփոխիչների) ապաշնորհ քաղաքականությունը, որոնք ցանկանում էին կյանքի կոչել առողջ ուժեր, պարալիզացնել խորհրդային համակարգի ճգնաժամի ձևավորման գործընթացը և իրականացնել հասարակության նորացում, սակայն դրանք հակառակ արդյունք տվեցին՝ ճանապարհ բացեցին ավերիչ ուժերի առաջ:

«Վերակառուցման ողբերգական եզրափակումը,– գրում է Բ. Կուվալդինը,– ավելի շատ կանխորոշված էր ծավալուն, ուժից վեր «գերխնդիրը» ավելի մանր՝ իրագործելի ծրագրային բլոկների բաժանելու, դրանք հաջորդաբար լուծե-

լու, առաջ «չընկնելու», բոլոր խնդիրները միանգամից լուծելու անհնարինությամբ, անկարողությամբ կամ ցանկության բացակայությամբ» [9, էջ 91]:

Ուրիշ հեղինակներ գտնում են, որ բարենորոգիչները ընդամենը գործիք էին արտասահմանյան հատուկ ծառայությունների ձեռքում [10]:

«Հռոմի պապի օրհնությունն ու հավանությունն ստացած՝ Խորհրդային Միության դեմ համընդհանուր «սառը պատերազմի» սկիզբը,– գրում է Ի.Յա. Ֆրոյանովը,– կարող է և պետք է դիտարկվի որպես Ռուսաստանի վրա ժամանակակից Խաչակրաց արշավանքի տարբերակը: Այստեղ ընկած է մեր երկրի պատմության սահմանագիծը՝ այս պահից սկսած ԽՍՀՄ–ում տեղի ունեցող փոփոխությունները զգալիորեն պայմանավորված են արտաքին ազդեցությամբ, որը գերակայող է դառնում, իսկ ներքին գործոնները երկրորդ պլան են մղվում: Իսկ Մ.Ս. Գորբաչովի և նրա՝ Յակովլևի ու Շևարդնաձեի նման համախոհների գալով Խորհրդային Միությունը քայլ կատարեց դեպի դրսից կառավարվող համաղետը» [11, էջ 61]:

Ո՞վ է ճիշտ:

Պատասխանելու համար այն հարցին, թե ինչու Խորհրդային Միությունը վերացավ աշխարհի քարտեզի վրայից, նախ և առաջ անհրաժեշտ է պարզել թե ինչպես դա տեղի ունեցավ:

Վերակառուցման և դրա եզրափակումը դարձած ԽՍՀՄ փլուզման մասին շատ է գրվել թե՛ մեզ մոտ, թե՛ արտասահմանում [12]: Միաժամանակ, ստիպված ենք արձանագրել, որ վերակառուցման իրական պատմությունը մինչ օրս էլ վերականգնված չէ: Եվ դա անելը այնքան էլ հեշտ չէ:

Ժամանակակից հետազոտողին հասանելի են այդ տարիների արխիվային փաստաթղթերի միայն շատ նեղ շրջանակ, իսկ հրատարակվող նյութերը ոչ միայն տենդենցիոզ ընտրության են ենթարկվում, այլև հաճախ հրապարակվում են լուրջ արժեթղթերով: Ինչ վերաբերվում է հիշողություններին, ապա այդ իրադարձությունների մասնակիցների մի մասը գտնում է, որ «անկեղծ խոսելու» ժամանակը «դեռ չի եկել» [13, էջ 375]: «Եթե ես իմ հուշերում գրեի ողջ ճշմարտությունը,– հայտարարել է Ա.Ա. Գրոմիկոն իր մահից ոչ շատ առաջ,– աշխարհը շուռ կգար» [14, էջ 245]:

Սակայն բանը միայն այդ չէ: Նույնիսկ կուլիսների հետևում քաղաքական գործիչները սովորաբար առաջնորդվում են՝ մտածել մի բան, ասել մեկ այլ բան, անել բոլորովին ուրիշ բան սկզբունքով: Իր մի շարք հարցազրույցներում Մ.Ս. Գորբաչովի մերձակա համախոհներից մեկը՝Ալեքսանդր Նիկոլաևիչ Յակովլևը, բացահայտորեն խոստովանել է, որ իրենք՝բարեփոխիչները,ստիպված են եղել «ստել և շողոքորթել» [15]:

Այդ պատճառով էլ հետազոտողները միշտ էլ որոշ հարցերի առնչությամբ տեղեկատվության պակաս են զգում, որոշ հարցերի վերաբերյալ էլ՝ ապատեղեկատվության առատություն:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած նյութերի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ աշխարհի քարտեզից Խորհրդային Միության անհետացմանը նախորդեցին՝

ա) տնտեսական ճգնաժամի առաջացումն ու խորացումը,

բ) միութենական իշխանության թուլացումը և նրա կողմից տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ վերահսկողության աստիճանական կորուստը,

գ) ընդդիմադիր, այդ թվում ազգայնական շարժման աճը և դրա կողմից տեղերում իշխանության գրավումը,

դ) նախկին գաղափարախոսության փլուզումը և գաղափարական նոր արժեքների տարածումը:

Մի պահ գայթակղություն է առաջանում ԽՍՀՄ փլուզումը դիտարկել որպես այս և նման այլ գործընթացների արդյունք: Սակայն տվյալ խնդրի նկատմամբ նման մոտեցումը ընդունելի կլիներ միայն այն դեպքում, եթե վերոհիշյալ գործընթացները ինքնաբուխ բնույթ ունենային:

Մինչդեռ, նույնիսկ Մ.Ս. Գորբաչովը և նրա մերձավոր կողմնակիցներն են խոստովանում, որ 1985թ. դրությամբ երկրում տնտեսական ճգնաժամ դեռ չկար: Հետևաբար, այն ի հայտ եկավ և սկսեց զարգանալ միայն վերակառուցման տարիներին: Եվ, չնայած դրա նախադրյալները ձևավորվել էին դեռ նախորդ ժամանակաշրջանում, բարենորոգիչների քաղաքականությունը հանգեցնում էր ոչ թե ճգնաժամի վերացմանը, այլ դրա խթանմանը:

Դրանք էին՝

1. հակաալկոհոլային կամպանիան, որը երկրի բյուջեի մեջ առաջին լուրջ ճեղքվածքն առաջ բերեց,
2. արտաքին առևտրում մենաշնորհից հրաժարվելը, որը մեծ չափով նպաստեց արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի ձևավորմանը, ինչն ավելի մեծ չափով հարվածեց բյուջեին և նպաստեց արտաքին պարտքի մեծացմանը,
3. 1987թ. տնտեսական բարեփոխումները, որոնք խթանեցին արտադրության կրճատումը, գնաճ առաջ բերեց և նույնպես հարվածեց բյուջեին,
4. կոոպերատիվների ստեղծումը, ինչը սկիզբ դրեց պետական սեփականության մասնավորեցմանը և քրեականացված կապիտալի օրինականացմանը, ինչն էլ իր հերթին ճանապարհ բացեց պետական միջոցների՝ դեպի մասնավոր սեկտոր արտահոսքի համար:

Նման արհեստական բնույթ ունեին նաև երկրում զարգացող քաղաքական գործընթացները: Կուսակցության ղեկավարության վերցրած կուրսը դեպի տնտեսության ապակենտրոնացումը ուղեկցվում էր կառավարման ապակենտրոնացմամբ՝ միութենական մարմինների թուլացումով և հանրապետականների ուժեղացմամբ: Այդ պայմաններում ապակայունացնող դեր էր խաղում ԽՄԿԿ «ինքնահիշխանազրկումը», ինչի հետևանքով կորցվեց վերահսկողությունը տնտեսական և քաղաքական գործընթացների նկատմամբ՝ ամբողջ երկրի մասշտաբով: Ընդ որում, թե՛ առաջինը, թե՛ երկրորդը «վերակառուցման ճարտարապետների» կողմից իրականացվում էր նպատակամղված ձևով, քանի որ նրանց հորինած քաղաքական բարեփոխումների արդյունքում ԽՍՀՄ–ը պետք է վերածվեր համադաշնության:

Մինչդեռ պատմական փորձը վկայում է, որ համադաշնությունը, որպես պետական կառուցվածքի ձև ոչ միայն հազվագյուտ երևույթ է, այլև անցումային ձև է հանդիսանում կամ դեպի դաշնությունը (եթե համադաշնային սկզբունքով միավորվում են անկախ պետությունները) կամ դեպի անկախ պետությունների համախումբը, եթե համադաշնային ձևին է անցնում դաշնությունը: Հետևաբար, ԽՍՀՄ վերափոխումը համադաշնության՝ ընդամենը միութենական պետությունը քանդելու քողարկված քայլ էր:

Կարելի էր ենթադրել, որ տնտեսական ճգնաժամի կայացումը և կենտրոնական իշխանության թուլացումը, որպես հետևանք, երկրում զանգվածային դժգոհության ալիք և ընդդիմության համախմբում առաջ բերեցին, որը (ընդ-

դիմությունը) հակառակ «վերակառուցման ճարտարապետների» ցանկության, ավելի ապակայունացրեց իրավիճակը երկրում և զարգացող գործընթացները անկառավարելի դարձրեց:

Սակայն, ինչպես վկայում են փաստերը, զանգվածային դժգոհությունների բորբոքման, ազգամիջյան հակամարտությունների գրգռման և ընդդիմության կազմակերպման գործում (ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում) վճռական դեր էին խաղում ԽՄԿԿ ԿԿ–ը և ԽՍՀՄ ՊԱԿ–ը (Պետական անվտանգության կոմիտե): Ընդ որում այդ գործունեության սկիզբն է համարվում 1987–1988թթ., այսինքն այն պահը, երբ տնտեսական ճգնաժամը նոր–նոր հասունանում էր, իսկ քաղաքական բարեփոխումը նոր էր պլանավորվում:

Սա նշանակում է, որ «վերակառուցման ճարտարապետները» հատուկ էին կյանքի կոչում քայքայիչ սոցիալական և քաղաքական ուժերին:

Հենց 1987–1988 թվականներին (այսինքն այն ժամանակ, երբ պլանավորվում էր քաղաքական բարեփոխումը և երկիրը դեռ գտնվում էր տնտեսական ճգնաժամի շեմին) է վերաբերվում հասարակության գաղափարական վերազինման սկիզբը, որն իրականացվում էր կուսակցության ղեկավարության կողմից հրապարակայնության գաղափարի դրոշի ներքո: Այն սկսվեց ստալինիզմի քննադատությամբ, ավարտվեց մարքսիզմի և խորհրդային իշխանության վարկաբեկմամբ:

«Բացախոսությունը,– գրում է Ֆ.Մ. Բուրլացկին,– դարձավ կոմունիստական համակարգի քանդման գրեթե գլխավոր կործանիչը»: «Օգոնյոկը», «Մոսկովսկիե նովոստին» և «Լիտերատուրնայա գազետան», իսկ նրանցից հետո նաև նոր հրատարակությունները և հատկապես հեռուստատեսությունը գրգռում էին հասարակական կարծիքը և դժոհությունն ուղղում էին ընդդեմ իշխանության համակարգի [16, էջ 12]:

Այսպիսով, կարելի է փաստել, որ այն բոլոր գործոնները, որոնք հանգեցրին ԽՍՀՄ փլուզմանը, գործի էին գցվել հենց «վերակառուցման ճարտարապետների» կողմից:

Ավելին, փաստերը վկայում են, որ ԽՍՀՄ–ը ոչ թե փլուզվեց՝ այլ մասնատվեց, ընդ որում, արագացված կարգով և գործող օրենքների կոպտագույն խախտումներով: Դա հատկապես վերաբերվում է 1991 թ. օգոստոսի 19–ից մինչև դեկտեմբերի 26–ն ընկած ժամանակահատվածին, երբ հանրապետություններում ծավալվեց միութենական սեփականության և զանգվածային տեղեկատվության միջոցների բռնագրավումների գործընթացը, միութենական պետական կառույցների արհեստական քայքայումը: Ըստ էության դա չորս ամսով երկարաձգված դանդաղ պետական հեղաշրջում էր:

Ինչո՞վ էին առաջնորդվում բարենորոգիչները:

Այս հարցի պատասխանները որոնելիս պետք է ուշադրություն դարձնել, որ վերակառուցման սկզբից ևեթ խորհրդային իշխանությունները հռչակեցին «Եվրոպան մեր ընդհանուր տունն է» մարտակոչը (1985 թ.), այնուհետև մշակվեց և ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյի կողմից հաստատվեց «համաեվրոպական տան» կոնցեպցիան (1987 թ.), ճանաչվեց աշխարհը մեկ համամոլորակային ղեկավարության կողմից կառավարելու գաղափարը (1988 թ.) և, վերջապես, ստորագրվեց Վիեննայի կոնվենցիան, որով հռչակվում էր միջազգային իրավունքի գերակայությունը ազգայինի նկատմամբ (1989 թ.):

Այս առումով հնարավոր ենք համարում առաջ քաշել հետևյալ վարկածը: Վերակառուցումը մտահղացվել էր որպես խորհրդային երկիրը համաշխարհային

տնտեսության մեջ ներքաշելու և, ոչ միայն «համաեվրոպական տան», այլև «նոր համաշխարհային կարգերի» ստեղծման նախապատրաստություն:

Դրա համար մեծ տերությունները պահանջում էին, որ.

1. ԽՍՀՄ–ը հրաժարվի իր ազդեցության գոտիներից,
2. վերացվեին ՏՓԽ–ն (տնտեսական փոխօգնության խորհուրդը) և ՎՊԿ–ն (Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը),
3. փոխվեր խորհրդային երկրի տնտեսական, քաղաքական և հոգևոր դեմքը,
4. ԽՍՀՄ–ը բաժանվեր ավելի մանր պետությունների:

Եվ իսկապես, ուսումնասիրվող նյութը ցույց տվեց, որ վերակառուցման սկզբում Մ. Ս. Գորբաչովն արդեն նպատակ ուներ վերացնել Խորհրդային Միությունը որպես պետություն–կորպորացիա:

«Գաղափարը»–խոստովանում է նախկին գլխավոր քարտուղարը 1992թ.,– ըստ էության կայանում էր նրանում, որպեսզի կոտրվի այն տոտալիտար հրեշի մեջքը, որին մեզ մոտ կոչում էին «Վարչահրամայական համակարգ» [17, էջ 136]:

Այդ նպատակին հասնելու համար պլանավորվում էր իրականացնել պետական սեփականության մասնավորեցում և վերականգնել բազմակացութաձև շուկայական տնտեսությունը, հեռացնել ԽՄԿԿ–ն իշխանությունից և ստեղծել բազմակուսակցական քաղաքական համակարգ, հրաժարվել «մարքս–լենինյան» գաղափարախոսության մենաշնորհից և անցնել արևմտյան նմուշի բուրժուական գաղափարախոսության, սեփականությունը և իշխանությունը կենտրոնից փոխանցել հանրապետություններին և ԽՍՀՄ–ը վերածել համադաշնության կամ համագործակցության, կանգնել զինաթափման ուղու վրա և հրաժարվել արտասահմանում ունեցած ազդեցության գոտիներից, առաջին հերթին՝ Արևելյան Եվրոպայի երկրներում:

Եթե ընդունենք այս վարկածը, Մ. Ս. Գորբաչովի և նրա մերձավոր շրջապատի քաղաքականությունը որոշակի իմաստ է ձեռք բերում: Ամբողջ հարցը կայանում է միայն նրանում, թե ով կարող էր նման ծրագիր գծել և հասկանում էին, արդյոք բարենորոգիչները, թե ուր կարող էր հասցնել դրա իրագործումը:

Ոչ,– ասում է Ալեքսանդր Սերգեևիչ Ցիպկոն. «Գորբաչովի թիմը, եզակի բացառություններով, չէր գիտակցում, որ իրականում քաղաքական բացախոսության իր այս քաղաքականությամբ խթանում է հակահեղափոխությունը» [18, էջ 26]:

Թողնելով «եզակի բացառություններով» արտահայտությունը Ա. Ս. Ցիպկոյի խղճի վրա, անդրադառնանք Ալեքսանդր Նիկոլաևիչ Յակովլևի հուշերին, որը 1985–1988 թթ. գլխավորում էր ԽՄԿԿ ԿԿ Պրոպագանդայի բաժինը: Միթե՞ նա էլ չէր հասկանում, թե ինչ է կատարվում:

Բացատրելով իր դիրքորոշումն այս հարցում, Ալեքսանդր Նիկոլաևիչը գրում է. «Իրական, այլ ոչ շինծու բարենորոգիչների խումբը մշակել էր (բնականաբար՝ բանավոր) հետևյալ պլանը. Լենինի հեղինակությամբ հարվածել Ստալինին, ստալինիզմին: Իսկ այնուհետև, հաջողության դեպքում, Պլեխանովով և սոցիալ–ժողովրդավարությամբ հարվածել Լենինին, լիբերալիզմով և «բարոյական սոցիալիզմով»՝ հեղափոխականությանն՝ ընդհանրապես» [19, էջ 14]:

«Խորհրդային ռեժիմը,– ասես Յակովլևին կրկնելով գրում է լատիշական ընդդիմության ղեկավարներից Յա. Վիդինշը,– կարելի է քանդել միայն բացախոսությամբ և կուսակցական կարգապահությամբ՝ քողարկվելով սոցիալիզմի

վերափոխման ֆրազներով»: Ուստի, ըստ նրա, սկզբում հարվածն ուղղված էր Ստալինի դեմ, հետո՝ Լենինի, հետո էլ՝ ամբողջ խորհրդային համակարգի:

Միգուցե, Մ.Ս. Գորբաչովը և նրա զինակիցները չէի՞ն հասկանում, թե ինչ հետևանքների կհանգեցնի երկրի համար ԽՄԿԿ–ն գահընկեց անելը:

Այս հարցին պատասխանելու համար պետք է հիշել, թե ինչպես էր 1984թ. Մ.Ս. Գորբաչովը հանդես գալիս իրական իշխանությունը կուսակցությունից խորհուրդներին հանձնելու դեմ: «Չէ՞ որ մենք,– ասում էր նա,– չունենք տնտեսության ինքնազարգացումն ապահովող մեխանիզմներ… Նման պայմաններում, եթե կուսակցական կոմիտեների առաջին քարտուղարները իշխանությունը հանձնեն տնտեսվարողներին, մեզ մոտ ամեն ինչ փուլ կգա»[20, էջ 97]:

Հետևաբար, եթե դա հասկանալով, գլխավոր քարտուղար դառնալուց հետո Մ. Ս. Գորբաչովն անմիջապես բարձրացրեց իշխանությունը տարանջատելու հարցը, որը նա ինքն ավելի ուշ անվանեց «գահից հրաժարում», նշանակում է, նա գիտակցորեն գնաց խորհրդային իշխանությունը քանդելու գործին:

Միգուցե «վերակառուցման ճարտարապետները» չէին հասկանում, թե ինչի կարող են հասցնել ԽՍՀՄ բարեփոխումներն այն տարբերակով, որն ընտրվեց:

Այս հարցի պատասխանը տալիս են Ա. Ն. Յակովլևի և Է. Ա. Շևարդնաձեի խոստովանությունները, որոնք նրանք արել էին ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալության նախկին տնօրեն Ու. Օդոմի հետ զրույցի ժամանակ. «Նրանք գիտեին, որ Խորհրդային Միությունը կքանդվի»[21, էջ 665]:

Դա հասկանում էր նաև Մ.Ս.Գորբաչովը: Հիշենք, ինչպես 1987 թվականին նա Վ. Ի. Վորոտնիկովին համոզում էր հետ կանգնել ՌՍՖՍՀ Կոմունիստական կուսակցություն ստեղծելու գաղափարից, պնդելով, որ դա կլինի առաջին քայլը ԽՍՀՄ փլուզման ուղղությամբ, և ինչպես 1989–1990 թթ. հենց այդ նույն գաղափարը իրագործվում էր իր ղեկավարությամբ:

Միգուցե բարեփոխիչները կարծում էին, որ ԽՍՀՄ փլուզումը նախկին խորհրդային հանրապետությունների համար ավելի հաջող զարգացման նոր հնարավորություններ՞ կստեղծի: Ելույթ ունենալով 1989թ. հուլիսի 14–ին Քաղբյուրոյի նիստում՝ Մ. Ս. Գորբաչովը հայտարարեց. «Մինչ այժմ արված բոլոր մշակումները հանգեցնում են այն հետևությանը, որ քայքայումը բոլոր ազգերին երկար տարիներ դուրս կբերի նորմալ հունից»[22, էջ 502]:

Իսկ ահա նրա 1990 թ. գարնանն արված կանխատեսումը. «Ինձ ոգևորում է, որ ներկա սերունդները.....իրենց մեջ ուժ գտան իրենց վրա պատասխանատվություն վերցնել արմատապես նոր հասարակական–պատմական լուծման համար, արհամարհելով այն բոլոր անհավանական քաղաքական, տնտեսական, հոգեբանական դժվարությունները, որ մեզ սպասում են այդ ճանապարհին: Ամեն ինչ դեռ առջևում է, այդ թվում նաև՝ գլխավոր դժվարությունները»[23]:

Մենք արդեն գիտենք, թե ինչ դժվարություններ էր տեսնում Մ.Ս. Գորբաչովը առջևում: Հիշենք նրա ելույթը 1987թ. հոկտեմբերի 12–ին Լենինգրադի Մարսյան դաշտում, որտեղ նա հիշեցնում էր լենինգրադցիներին բլոկադայի մասին: 1991թ. հունվարի 9–ին, եթե հավատանք Ֆ.Դ.Բոբկովին, Միխայիլ Սերգեևիչը ասել է Վ.Ա.Կրյուչկովին. «Թոռներիս եմ խղճում»: Կնշանակի, որ իր կողմից նախաձեռնած վերակառուցումը բարենպաստ արդյունքներ չի տալու ոչ մոտ, ոչ էլ հեռավոր ապագայում:

Միգուցե, նման հեռատեսությամբ

միայն գլավոր քարտուղա՞րն էր օժտված: Ոչ: Ահա թե ինչ է գրել իր օրագրում 1990թ. նոյեմբերի 15–ին Ա.Ս.Չեռնյաևը. «Քանդել նախկին համակարգը առանց քաոսի հնարավոր չէ: Սակայն մարդիկ չեն ցանկանում վճարել 70 տարվա հանցավոր քաղաքականության համար: Եվ երբեք էլ չեն հասկանա, թե ինչու 21–րդ դարի վերջին քաղաքակիրթ երկիր դառնալու համար պետք է ստիպված անցնեն սովի, ավերածությունների, անիշխանության, հանցագործությունների ծաղկման և մեր այլ հաճույքների միջով»[24, էջ 886]:

Սակայն խոսքը ԽՍՀՄ–ը «քաղաքակիրթ երկիր» դարձնելու մասին չէր: Այդ նույն ժամանակ, երբ Ա.Ս.Չեռնյաևը գրում էր վերը բերված տողերը, ԱՄՀ (Արժույթի միջազգային հիմնադրամ) և միջազգային այլ կառույցներն արդեն մշակել էին պլաններ՝ Խորհրդային Միությունը շուկայական ռելսերի վրա տեղափոխել, ապահինդուստրացման ենթարկել խորհրդային հանրապետությունները և դրանք համաշխարհային տնտեսության հումքային կցորդի վերածել:

Հատկանշական է, որ Ա.Ն. Յակովլևը նույնպես սկսված վերափոխումների կարևորագույն խնդիրներից մեկը համարում էր դեհինդուստրիալիզացիան:

Մինչդեռ, եթե թարգմանենք դեհինդուստրիալիզացիա (ապահինդուստրացում) տերմինը ավելի հասկանալի լեզվով, դա նշանակում է արդյունաբերական պոտենցիալի և դրա հետ կապված ենթակառուցվածքների (այսինքն դրանք սնուցող էներգետիկ հզորությունների, սպասարկող տրանսպորտային ուղիների, դրա համար մասնագետներ պատրաստող միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգի, դրա համար աշխատող կոնստրուկտորական բյուրոների և գիտահետազոտական ինստիտուտների և այլն) քայքայում:

Էլ ավելի ցինիկորեն էին գնահատում բարեփոխումների խնդիրները «մլադոռեֆորմատորները» (երիտասարդ բարեփոխիչները): Ամերիկացի լրագրող Փոլ Խլեբնիկովի խոսքերով «Գայդարը իր գործընկերների հետ գտնում էր, որ Ռուսաստանում ապրում են միայն, ինչպես իրենք էին անվանում, «սավոկները», և այն ամենը, ինչ Ռուսաստանում գոյություն ուներ, պետք է քանդվի և հետո նորը ստեղծել (աճեցնել).....Հանուն այդ նպատակի ընդունելի են բոլոր մեթոդներն ու միջոցները: Եվ թող ամեն ինչ վերացնի գնաճը.....Հին սերունդը մեղավոր է»: «....Ռուսաստանի այն ժամանակվա արտաքին գործերի նախարար, իսկ այժմ կալիֆորնիացի դեղագործ Կոզիրևը,– գրում է Ն.Բ.Բիկկենինը,– առանց քաշվելու իր հայրենակիցներին «բանող անասուն» (быдло) էր անվանում»[25, էջ 667]:

«Վերակառուցման ամենագլխավոր հերոս Մ.Ս. Գորբաչովը,– ավելի ուշ գրում է Վ.Ի.Վորոտնիկովը,– իր հարցազրույցներում, սկսած 1992թ., անամոթաբար հայտարարում է, որ ամբողջ «դեմոկրատական հեղաշրջումը» ի սկզբանե հենց այդպես էլ մտածված էր իր կողմից, նա պարզապես թաքցնում էր, քայլ առ քայլ առաջ շարժվելով»: Հակառակ դեպքում, հայտարարում է նա «եթե ես այն ժամանակվանից հայտնի դարձնեի վերջնական նպատակը, ինձ անպայման գահընկեց կանեին»: Սեփական երկրի և ժողովրդի նկատմամբ ինչպիսի հրեշավոր ցինիզմի է պետք հասնել նման հայտարարություն անելու համար»[25, էջ 667]:

Ավելի անկեղծորեն էր դա խոստովանում Ա.Ն. Յակովլևը. «Ի վերջո ես եկա մի հետևության՝ այս կարգերը կարելի է պայթեցնել միայն ներսից, օգտագործելով դրա տոտալիտար (ամբողջատիրական) զսպանակը՝ կուսակցությունը: Օգտագործելով այնպիսի գործոններ,

ինչպիսիք են կարգապահությունն ու տարիների ընթացքում դաստիարակված վստահությունը գլխավոր քարտուղարի նկատմամբ»: Իսկ ահա նրա բառերը մեկ այլ հարցազրույցից. «Գործի օգուտի համար ստիպված էինք լինում նաև նահանջել և խորամանկել: «Ես ինքս մեղսավոր եմ՝ մի անգամ չէ, որ կեղծավորություն եմ արել: Խոսել եմ «սոցիալիզմի նորացման» մասին ինքս շատ լավ իմանալով, թե ինչի է դա հասցնելու»: «Խորհրդային տոտալիտար ռեժիմը,– խոստովանում էր նա,– կարելի էր քանդել միայն բացախոսության և կուսակցության տոտալիտար կարգապահության շնորհիվ, քողարկվելով սոցիալիզմի կատարելագործման շահերով» [26, էջ 14]:

«Վերակառուցման սկզբից ևեթ,– գրում է Ֆ. Դ. Բորկովը,– ամեն ինչ արվում էր մտածված և առանց շտապելու, մեր առաջնորդները հասկանում էին՝ եթե միանգամից հայտնեն վերջնական նպատակը՝ վերացնել սոցիալիստական կարգերը և ցրել կոմունիստական կուսակցությունը, դժվար չէ պատկերացնել, թե ինչ համաժողովրդական դժգոհություն դա առաջ կբերեր»[27, էջ 398]:

Այսպիսով, կարելի է պնդել, որ բարենորոգիչները լավ հասկանում էին, թե ինչպիսին էին լինելու վերակառուցման արդյունքները և հետևանքները, և ուրեմն, գիտակցաբար ԽՍՀՄ–ը տանում էին դեպի փլուզում: Ամբողջ հարցը նրանում է, թե ինչն էր նրանց առաջ մղում:

Սրա հետ կապված, բոլորովին էլ ոչ պատահականորեն, ի հայտ եկավ վարկած այն մասին, որ վերակառուցման գլխավոր շտաբը գտնվում էր ոչ թե Մոսկվայում, այլ Վաշինգտոնում:

Այս վարկածն անմիջապես առարկություններ առաջ բերեց ազատական մամուլում: Իր «Կայսրության վախճանը» գրքում Ե.Տ. Գայդարը նշում էր. … «ես իմ աչքերով էի տեսնում, թե ամերիկյան իշխանությունների համար ինչ անհավանական անակնկալ էր Խորհրդային Միության փլուզումը» [28, էջ 81]:

Եթե Եգոր Տիմուրևիչն այս մասին գրեր անմիջապես «Խորհրդային Միության փլուզումից» հետո, նրա խոսքերին կարելի կլիներ վստահությամբ վերաբերվել: Սակայն 2006թ., երբ նա արտահայտվում էր նման կերպ իր հուշերում, արդեն հրապարակվել էր ամերիկյան նախկին հետախույզ Պիտեր Շվեյցարի «Հաղթանակ» գիրքը, որում համոզիչ տվյալներ են բերվում այն մասին, որ ամերիկյան հատուկ ծառայությունները ԽՍՀՄ քանդելու նպատակաուղղված քաղաքականություն էին վարում:

Ուստի ԽՍՀՄ փլուզման գործում արտաքին գործոնի մասնակցության մասին վարկածը հիմնավորումների կարիք չունի: Խնդիրը միայն նրանում է, որ այդ մասին ավելի կոնկրետ պատկերացումներ ձեռք բերվեն:

Գոյության իրավունք ունի նաև արտասահմանյան հատուկ ծառայությունների հետ «վերակառուցման ճարտարապետների» ունեցած կապերի մասին վարկածը: Բավական է հիշել Ա.Ն. Յակովլևի «մերկացման» հետ կապված տարօրինակ պատմությունը: Ուշադրության է արժանի նաև ԽՍՀՄ ՊԱԿ–ի նախագահ Վ.Ա. Կրյուչկովի ելույթը 1991թ. հունիսի 17–ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի փակ նիստում, որում նա ուղղակիորեն հայտարարեց «ազդեցության գործակալների» գոյության մասին, որոնց Արևմուտքը օգտագործում էր ԽՍՀՄ–ը քանդելու համար: Այս փաստը հայտնի փաստ է: Պակաս հայտնի է այն, որ այդ հայտարարությանը ՊԱԿ–ի նախագահը կցել է երկու հավելված: «Առաջինը ազդեցության գործակալների այբբենական ցանկն է, երկրորդը՝ առաջնային գործակալական

փաստաթղթերի տեքստերը, այդ թվում՝ արտասահմանյան հատուկ ծառայությունների՝ ԽՍՀՄ–ը ներսից պայթեցնելու գործի կազմակերպմանը վերաբերող փաստաթղթերի»: Ելույթ ունենալով Ռուսաստանի Դաշնության Գերագույն Խորհրդի 1992 թ. փետրվարի 7–ի նիստում՝ Ս. Ն. Բաբուրինն առաջարկեց հրապարակել այդ հավելվածները: Սակայն դա մինչ օրս չի արվել:

Ստուգման արժանի է նաև խորհրդային առաջնորդներին «գնելու» վարկածը: Անդրադառնալով այս խնդրին, գեներալ Լ.Գ. Իվաշովը գրում է. «Իհարկե, չեմ ուզում խոսել ծախվածության մասին, կաշառքների (մեր պատկերացմամբ) մասին, չնայած մինչ օրս էլ հայտնի չէ, թե ինչու Հարավային Կորեայի նախագահ Ռո Դե Ուն Մ.Ս. Գորբաչովին 100 հազար դոլար հանձնեց 1991թ. ապրիլին, որոնք պահվում են Բոլդինի սեյֆում: Սակայն, եթե վերլուծենք Մ.Ս. Գորբաչովի ստացած յոթ մրցանակները՝ ամերիկյան և միջազգային, ապա դրանք բոլորն էլ շնորհվել են ԽՍՀՄ կողմից որոշակի զիջումների դիմաց: Եվ արդյո՞ք միայն Ռո Դե Ուն էր խորհրդային ղեկավարին նման կլորիկ գումարներ նվիրում»[29, էջ 669]:

Տարածված կարծիք կա նաև, որ վերակառուցումն սկսելով, բարենորոգիչները փորձում էին իշխանությունը փոխանակել փողով: Ա.Ս.Ցիպկոն նման մեղադրանքները կատաղի կերպով վիճարկում է: Սակայն նա, նախ և առաջ, ռեֆորմատորների շրջանակը սահմանափակում է միայն չորս ազգանուններով, և երկրորդ, նրանց բոլորին դնում է մի շարքի վրա [30, էջ 669]:

Մինչդեռ բարենորոգիչներն այնքան էլ միասնական չէին: Չի կարելի նույն շարքի վրա դնել Մ.Ս. Գորբաչովին և Ն.Ի. Ռիժկովին, Ա.Ն. Յակովլևին և Ե.Կ. Լիգաչովին: Մեր տրամադրության տակ եղած նյութը վկայում է, որ վերակառուցման «ճարտարապետների» և «աշխղեկների» շարքում կային թե՛ այնպիսիները, որոնք իսկապես ձգտում էին խորհրդային համակարգի բարեփոխմանը, և թե՛ նրանք, ովքեր ձգտում էին ոչնչացնել այն:

Առաջին խմբին է դասվում խորհրդային ամենապարկեշտ ղեկավարներից մեկը՝ Ն.Ի. Ռիժկովը: Հենց այդ պատճառով էլ նա ավելի ուշ ցավով խոստովանում է. «Այո, վերակառուցման գործին, գտնում եմ, որ դավաճանեցին: Մենք դավաճանեցինք: Մենք, այսինքն նրանք, ովքեր այն մտածել էին, ովքեր սկսել էին, ովքեր իրագործել էին և ովքեր այն թաղեցին: Եվ ինքս ինձ այդ գործընթացներից չեմ առանձնացնում, միգուցե, բախտի բերմամբ, միայն թաղմանը չմասնակցեցի… »[31, էջ 375]:

Սակայն բարենորոգիչների մեջ կային և այնպիսիները, ովքեր փորձում էին վաստակել վերակառուցման վրա և որոնց մասին ակամա հիշում ես այն անեկդոտը, երբ մի կին ընկերուհուն հարցնում է. «Դու ինչպե՞ս ես տրվել առաջին անգամ, փողով, թե սիրելով», ինչին ընկերուհին պատասխանում է. «Իհարկե սիրելով: Տաս ռուբլին մի՞թե փող է»:

Հավանաբար խորհրդային առաջնորդներն ավելի մեծ բանի հույսեր ունեին:

Ուստի կարելի է հասկանալ վիրավորանքի այն զգացումը, որով Ա.Ն. Յակովլևը հեռացավ այս աշխարհից. «Ուզում եմ մեկ անգամ էլ կրկնել, որ դժվար է զսպել և չհայտնել տարակուսանքս Արևմուտքի որոշ չափով տարօրինակ և երկիմաստ դիրքորոշման նկատմամբ՝ Խորհրդային Միությունում և Ռուսաստանում տեղի ունեցող բարեփոխումների հանդեպ: Իմ կարծիքով, մեր մտադրությունները և գործողությունները բազմակողմանիորեն չգնահատվեցին Արևմուտքի քաղաքական առաջնորդների կողմից… Գրում

եմ այդ մասին ցավով, սակայն նաև հույսով»[32, էջ 607]:

Իր հուշերում Ալեքսանդր Նիկոլաևիչ Յակովլևը վիրավորվում է Ջ. Բուշի (Ջ. Բուշ ավագ) և ամերիկյան մի քանի այլ քաղաքական գործիչների հայտարարություններից, որ ԱՄՆ–ը հաղթել է ԽՍՀՄ–ին սառը պատերազմում: Ի՞նչն էր նախկին խորհրդային ղեկավարի անհամաձայնությունն առաջ բերել: Պարզվում է, ոչ թե ամերիկացիներն են հաղթել, այլ խորհրդային առաջնորդներն իրենք են հանձնել սեփական երկիրը:

Հանձնել էին և հուսով էին, որ իրենց շնորհակալություն կհայտնեին:

Իսկ ամերիկացիները ոչ միայն չուզեցին համագործակցել իրենց հետ որպես հավասարը հավասարի, ոչ միայն ինչպես հարկն է չվճարեցին դավաճանության համար, այլ նույնիսկ ոտքերը լիզել թույլ չեն տալիս:

Բայց չէ որ նրանց էլ է պետք հասկանալ: Ցանկացողները շատ են:

Ընդ որում, չնայած բոլոր ջանքերին, Արևմուտքի աչքերում խորհրդային կուսակցական առաջնորդներին այդպես էլ չհաջողվեց լիովին «արդարանալ»: «Յակովլևն այժմ թոշակի է անցել,–գրում է Վ.Կ.Բուկովսկին,–քաղաքականությամբ չի զբաղվում: Նա հիմա գլխավորում է Ռուսաստանի նախագահին կից Ռեպրեսիաների (բռնաճնշումների) ենթարկվածների վերականգնման հանձնաժողովը: Այնպես, ինչպես ասենք 1945թ. Օսվենցիմի զոհերի վերականգնմամբ զբաղվեր Գեբելսը»[33, էջ 670]:

Խե՜ղճ Ալեքսանդր Նիկոլաևիչ:

Ինչպես էր ջանում դուր գալ նոր տերերին: Բայց այդպես էլ նրանց աչքերում մնաց որպես խորհրդային Գեբելս:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 31.10.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Медведев В. А.** У перестройки был свой шанс. Прорыв к свободе. О перестройке двадцать лет спустя. Критический анализ. М., 2005.
2. **Гайдар Е. Т.** Гибель империи. М., 2006.
3. **Медведев В. А.** там же. М., 2005.
4. **Шахназаров Г. Х.** Цена свободы. Реформация Горбачева глазами его помощника. М., 1994.
5. **Горбачев М. С.** Особенности момента и проблема выбора. М., 1991.
6. **Островский А. В.** Глупость или измена? Расследование гибели СССР. М., 2011.
7. **Горбачев М. С.** Декабрь–91. Моя позиция. М., 1992.
8. История от Горбачева. Профиль, 2010. N 12, 5 апреля.
9. **Кувалдин Б.** Три развилки горбачевской перестройки. О перестройке 20 лет спустя. Критический анализ. М., 2005.
10. **Кузьмич А.** Заговор мирового правительства. Россия и «золотой миллиард». М., 1994. **Виноградов А.** Тайные битвы XX века. М., 1999. Платонов О. Государственная измена. М., 2004. **Швеякин А. П.** Загадка гибели СССР. История заговоров и предательств 1945–1991гг. М., 2004.
11. **Фроянов И. Я.** Погружение в бездну. М., 2002.
12. См., например: Маслов Д. В. 1) Историографические и методологические основы исследования состояния советской системы. М., 2004. 2) Состояние советской системы в перспективе ее трансформации 1980–90–х гг., проблемы историографии, теории и методологии исследования. Автореф. дис.…д–ра истор.наук. М., 2004. **Дроконова О.Н.** «Феномен Горбачева» и его эпоха в американо–британских источниках и исследованиях 1980–х–1990–х гг. Автореф. дис.…канд. ист. наук. Нижневартовск, 2006.
13. **Яковлев А. Н.** Сумерки. М., 2005.
14. **Шевченко Г. А.** Побег из коридоров МИДа. М., 2004.

15. **Яковлев А. Н.** Нам приходилось лгать и лицемерить. Вечерняя Москва. 2001 г., 11 июля.
16. **Бурлацкий Ф. М.** Михаил Горбачев–Борис Ельцин. Схватка. М., 2008.
17. **Горбачев М. С.** Декабрь–91. М., 1992.
18. **Ципко А. С.** Перестройка или бунт против марксистских запретов. М., 2001.
19. **Яковлев А. Н.** Большевизм–социальная болезнь XX века. М., 2001.
20. **Печенев В.** Горбачев: к вершине власти. М., 1991.
21. **Островский А. В.** Глупость или измена? Расследование гибели СССР. М., 2011.
22. В Политбюро ЦК КПСС.....М., 1989.
23. Правда. 1990 г. 28 марта.
24. **Черняев А. С.** Совместный исход. М., 2002.
25. **Островский А. В.** там же. М., 2011.
26. **Яковлев А. Н.** Большевизм – социальная болезнь XX века.
27. **Бобков Ф. Д.** КГБ и власть. М., 2005.
28. **Гайдар Е. Т.** там же. 2005.
29. **Островский А. В.** там же. М., 2011.
30. **Островский А. В.** там же. М., 2011.
31. **Рыжков Н. И.** Перестройка: история предательств. М., 1992.
32. **Яковлев А. Н.** Сумерки. М., 2005.
33. **Островский А. В.** Московский процесс. 2011.
34. **Мэтлок Д. Ф.** Смерть империи. Взгляд американского посла на распад Советского Союза. М., 2003.

ВОКРУГ ВОПРОСА ПО РАЗВАЛУ СОВЕТСКОЙ ИМПЕРИИ

МАРТИРОСЯН ШИРИН

Факультет истории и правоведения Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна
Кандидат исторических наук, доцент кафедры всемирной истории и методики ее преподавания

Представленная статья показывает, что горбачевская перестройка была задумана как подготовка к сознательному разрушению СССР, втягиванию страны в мировую экономику и созданию «нового миропорядка». Вместе с тем продемонстрировано, как тщательно утаивалась идея развала и какую роль сыграл внешний фактор в деле разрушения.

Дата представления статьи: 31.10.2012

ON THE ISSUE OF THE COLLAPSE OF THE SOVIET EMPIRE

SHIRIN MARTIROSYAN

PhD in Historical Sciences, Associate Professor of the Chair of the World History and its Teaching Methods,
Faculty of History and Jurisprudence, ASPU after Khachatur Abovyan

The author of the article argues that the M. Gorbachev Reconstruction (Perestroyka) had deliberately been designed to cause the collapse of the Soviet Union, to drag the country in the world economy and lay a foundation to establish a “New World Order”. Meanwhile, the author demonstrates how the process of collapse was kept secretly, and the role of foreign factors contributed to that collapse.

Article submission date: 31.10.2012